



ՀԵՌԱԿԱ՝ ԳՐԱՎՈՐ ՀԱՐՑՄԱՆ ԿԱՐԳՎ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ
ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ, Մ-6, ՎԱՆԱՁՈՐ-ԱԼԱՎԵՐԴԻ-ՎՐԱՍՏԱՆԻ
ՍԱՀՄԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԱՎՏՈՄՈՒԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ (ԿՄ 38+450 ԿՄ 90 + 191
ՀԱՏՎԱԾ) ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ, ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՅՈՒՆ
ՋԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԵՎ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ
ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

09 օգոստոսի 2024 թվական

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ՀՀ փոխվարչապետ

S. Խաչատրյան

ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ՀՀ էկոնոմիկայի նախարար

Գ. Պապոյան

ՀՀ շրջակա միջավայրի նախարար

Հ. Սիմիդյան

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների
նախարար

Գ. Սանոսյան

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների
նախարարի տեղակալ (ճանապարհային ոլորտը համակարգող)

Ք. Ղալեչյան

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Ա. Հարությունյան

ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի պարտականությունները
կատարող

Ա. Գուգարաց

Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ (համաձայնությամբ,
Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի
շրջանակներում, ճանապարհաշինության բնագավառը
համակարգող տեղակալ)

Լ. Հովհաննիսյան

«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի
իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային
կազմակերպության տնօրենի տեղակալ ծրագրի ղեկավար
(համաձայնությամբ)

Ա. Բաբայան

«Ճանապարհային դեպարտամենտ» պետական ոչ առևտրային
կազմակերպության գլխավոր տնօրենի պարտականությունները
ժամանակավոր կատարող

Ս. Պետրոսյան

Խորհրդի նիստն անցկացվել է 2024 թվականի օգոստոսի 09-ին հեռակա՝ գրավոր հարցման կարգով: ՀՀ փոխվարչապետ, կառավարման խորհրդի նախագահ Տիգրան Խաչատրյանի՝ ս.թ. օգոստոսի 08-ի թիվ /03.62/27257-2024 գրությամբ Խորհրդի անդամներին ուղարկվել է օրակարգը և կից նյութերը՝ Խորհրդի անդամներին առաջարկվելով իրականացնել գրավոր քվեարկություն:

Խորհրդի անդամների կողմից օրակարգի վերաբերյալ առաջարկություններ կամ առարկություններ չեն ստացվել, ուստի, օրակարգը համարվել է հաստատված:

Համաձայն Խորհրդի աշխատակարգի 13-րդ կետի և սույն նիստի գրավոր քվեարկության արդյունքների՝ Խորհուրդն օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումը.

Օրակարգային 1-ին հարց՝ ԱԶԲ ֆինանսավորմամբ իրականացվող Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր, Տրանշ 3-ի շրջանակներում 2015 թվականի մարտի 30-ի թիվ 03-CS-001 խորհրդատվական ծառայությունների պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ:

Որոշվեց՝

1. Հաստատել «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի և «ԱյԱրԴի Ինժեներինգ» Ս.Բ.Լ միջև 2015թ-ի մարտի 30-ի կնքված թիվ 03-CS-001 պայմանագրի թիվ 15 փոփոխման հրահանգը:
2. «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրենի պարտականությունները ժամանակավոր կատարող Ս.Պետրոսյանին՝ գործող կարգին համապատասխան «ԱյԱրԴի Ինժեներինգ» Ս.Բ.Լ հետ սեղմ ժամկետում ստորագրել 2015թ-ի մարտի 30-ի կնքված թիվ 03-CS-001 պայմանագրի թիվ 15 փոփոխման հրահանգը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ**

ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ